Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2013 թվական, սեպտեմբերի 20, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Շամամ Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Բորիս Խառատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ծեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Համլետ Դանիելյան	Մեքենաշինարարների և սարքաշինարարների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Կարինե Ալոյան	<<Էլեկտրամիություն>> արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի տարածքային միության նախագահ
Սուրեն Չիբուխչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության <<ԱՐՄԵՆՊԱԿ>> ճյուղային միության նախագահ
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ-սոցիալական գործընկերության հարցերով փորձագետ

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Թադևոս Ավետիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Աստղիկ Մինասյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ
Հասմիկ Խաչատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Նվեր Արզունյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի եվրաինտեգրման վարչության իրավական բարեփոխումների բաժնի պետ
Հայկ Այվազյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար
Վահան Սիմոնյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության գործադիր տնօրեն
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսագիտական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ
Լուսինե Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի առաջատար մասնագետ, Հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի նիստը արձանագրող

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Արա Պետրոսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Սուրեն Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Արթուր Հովհաննիսյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի դատաիրավական բարեփոխումների վարչության պետ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության <<Տաքսի ծառայությունների ասոցիացիա>> ճյուղային միության գործադիր տնօրեն
Ժանետա Թորոսյան	Մշակույթի և ԶԼՄ-ների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Հանձնաժողովի քարտուղար

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. **<<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծի ներկայացում և քննարկում,**
2. **<<Պետական նպաստների մասին>> և <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքների նախագծերի ընդհանուր դրույթների ներկայացում,**
3. **Հայաստանի Հանրապետությունում ընթացող տեսչական բարեփոխումների գործընթացի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության ներկայացում,**
4. **Այլ հարցեր:**

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նախ նշվեց, որ 2013 թվականի ընթացքում Հանձնաժողովի 1-ին նիստն է հրավիրվում՝ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված: Նշվեց նաև, որ այսուհետ առավել մեծ ուշադրություն է դարձվելու Հանձնաժողովի նիստերի հրավիրման հաճախականությանը:

Հանձնաժողովի նախագահի կողմից հարց բարձրացվեց, թե արդյոք կան նիստի օրակարգի նախագծի հետ կապված հարցեր կամ առաջարկներ: Նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկներ չներկայացվեցին: Հանձնաժողովի անդամների կողմից միաձայն հաստատվեց նիստի օրակարգը:

1. **Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյանը:**

Թ. Ավետիսյանի կողմից ներկայացվեց, որ <<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է զբաղվածության ռազմավարության գերակայությունների իրականացման հիմնական մեխանիզմների ամբողջական և արդյունավետ օրենսդրական ապահովման, զբաղվածության քաղաքականության նոր մոդելի իրավական հիմքերի ամրագրման նպատակով: Նշվեց, որ <<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծից բխող լրացումներ են կատարվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, որոնց նախագծերը ներկայացվել են միասնական փաթեթով:

Ներկայացվեց <<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծով կարգավորման առարկայի բովանդակությունը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում բնակչության արդյունավետ զբաղվածության խթանման տնտեսական և կազմակերպական նոր դրույթներն ու իրավական հիմքերը, զբաղվածության իրավունքի իրականացումը՝ հաշվի առնելով տնտեսության ոլորտային զարգացման առանձնահատկությունները, գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության բնագավառում պետության կողմից տրվող երաշխիքները:

Հակիրճ ներկայացվեցին <<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծով կարգավորվող զբաղվածության քաղաքականության հիմնական խնդիրները, ինչպես նաև դրանց կարգավորումները: Նշվեց, որ <<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծի հիմքում ընկած է զբաղվածության նոր մոդելի իրացման իրավական հիմքերի ապահովումը: Նոր մոդելը բնութագրվեց՝ որպես <<ակտիվ>> քաղաքականության մոդել, հիմնված՝ <<աջակցել և պահանջել>> հիմնարար սկզբունքի վրա, մինչդեռ գործող օրենքով սահմանված զբաղվածության քաղաքականության մոդելը հիմնականում բնութագրվեց՝ <<պասիվ>> քաղաքականության մոդել:

Նշվեց նաև, որ օրենսդրական փոփոխություններով նախատեսվում է կրճատել գործազրկության նպաստի վճարման տևողությունը (<<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծով գործազրկության նպաստի վճարման տևողությունը սահմանվել է 3 ամիս):

Թ. Ավետիսյանի կողմից խոսքն ամփոփելուց հետո Հանձնաժողովի անդամներ Բ. Խառատյանի, Շ. Բարսեղյանի, Պ. Գաբրիելյանի, Ս. Չիբուխչյանի կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1. Արդյոք ինչով է պայմանավորված գործազրկության նպաստի վճարման տևողության կրճատումը:
2. <<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը իրականացնում է ամենամյա ծրագրի մոնիթորինգն ու գնահատումը, իսկ 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում է սոցիալական պաշտպանության ծրագրերի մոնիթորինգի ու գնահատման համակարգի միջոցով՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: Արդյոք խնդիր չի առաջանում այստեղ:
3. Արդյոք ինչ նկատի ունեք <<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում՝ աշխատանք փնտրող չզբաղված անձի տարիքը՝ որպես աշխատանք փնտրող չզբաղված անձի համար աշխատաշուկայում անմրցունակության որոշարկման չափանիշ դիտարկելով: Եվ արդյոք տարիքը՝ որպես չափանիշ դիտարկելը, չի համարվում խտրականության դրսևորում և չի հակասում ՀՀ Սահմանադրությանը:
4. Արդյոք չեք կարծում, որ <<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծում աշխատանքի տեղավորման կազմակերպությունների և գործատուների միջև պայմանագրային հարաբերությունների վերաբերյալ դրույթներ ներառելով, շատ խնդիրներ իրենց լուծումները կստանային:
5. Անհասկանալի է <<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում ներկայացված՝ զբաղվածության պետական ծառայություններ մատուցող պետական և աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների միջև մրցակցային, փոխշահավետ և կայուն համագործակցության սկզբունքը:
6. Արդյոք գործազրկության նպաստի վճարման 3 ամիս ժամկետը չի դրդի գործազուրկներին սեզոնային աշխատանքների միջև ընկած ժամանակահատվածներում հարմարվել և, որպես ապրուստի միջոց, օգտագործել գործազրկության նպաստը:
7. Սովետական միության տարիներին մոտեցում կար, որ նոր աշխատողի՝ որպես մասնագետ կայանալու համար առնվազն 2 տարի է հարկավոր: Արդյոք բավարար է 3 ամիս ժամկետը, որպեսզի աշխատողն ինտեգրվի կոլեկտիվին (Առաջարկվեց ծրագրերն ուղղել երիտասարդ մասնագետների հարթություն:):

Հնչեցված բոլոր հարցերին Թ. Ավետիսյանի, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Շ. Հարությունյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ: Մասնավորապես նշվեց, որ.

1. Կատարված վերլուծությունների արդյունքում՝ գործազրկության նպաստի վճարման միջին տևողությունը կազմել է 10 ամիս, իսկ աշխատանքի տեղավորման մակարդակը բավականին ցածր է՝ 8.9 տոկոս: Նշվեց նաև, որ նախատեսված նոր ակտիվ քաղաքականության պարագայում, երբ նպատակ է դրվել կոնկրետ անձին աշխատանքի տեղավորման հարցը, այդ ցուցանիշը բավականին ցածր է: Նպաստների տրամադրումը շատ քիչ է օգնում զբաղվածության ապահովման հարցում, հետևաբար, ներկայիս քաղաքականության հիմքում դրվել է այն համոզմունքը, որ ներկայիս ռեսուրսների բաշխումը զբաղվածության ակտիվ քաղաքականության իրականացմանն առավել արդյունավետ կլինի:
2. Զբաղվածության քաղաքականությունը մշակվում և իրականացվում է լիազոր մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առանձին ստորաբաժանումների միջոցով, որոնք իրականացնում են իրենց առանձնահատուկ գործառույթներ և, որ գործառույթների առումով ոչ մի շփոթություն չի կարող առաջանալ:
3. Զբաղվածության ծրագրերը առավելապես ուղղվելու են երիտասարդների և կանանց աշխատանքի տեղավորմանը: Լրացվեց, որ ընդհակառակը այս առումով հանվում է անմրցունակությունը և վերոնշյալ անձինք դառնում են մրցունակ, այսինքն՝ ստեղծվում են հավասար պայմաններ բոլորի համար: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրությանը հակասության հարցին, ապա որոշվեց այս խնդիրը քննարկել իրավաբանի հետ և ունենալ իրավաբանի պաշտոնական եզրակացություն:
4. Նախատեսվում է օրենքի նախագծում ավելացնել գործատուի և աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության միջև համագործակցության հուշագրի կնքման վերաբերյալ դրույթներ:
5. Զբաղվածության պետական ծառայություններ մատուցող պետական և աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունները հանդիսանում են աշխատանքի շուկայի մասնակիցներ, որով էլ պայմանավորված է մրցակցային, փոխշահավետ և կայուն համագործակցության սկզբունքը:
6. Որոշվեց լրացուցիչ քննարկել այս հարցը և որոշակի չափորոշիչներ սահմանել 3 ամիս ժամկետի կիրառման հարցում:
7. Որոշվեց այս հարցի քննարկումը հետաձգել հաջորդ փուլ՝ 2014 թվականի ծրագրերի հարթությունում քննարկելու նպատակով:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

<<Զբաղվածության մասին>> ՀՀ օրենքի նախագիծն ընդունել ի գիտություն՝ առաջարկությունների և խնդիրների հետագա քննարկման պայմանով:

<u>2.</u> Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ Ա. Մինասյանը:

Ա. Մինասյանի կողմից հակիրճ ներկայացվեցին <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի նախագծի անհրաժեշտությունը, նպատակը, օրենքով կարգավորման ենթակա ընդհանուր դրույթները, սոցիալական աջակցության մակարդակները:

Որպես սոցիալական աջակցության հիմնական նպատակ՝ նշվեց կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջմունքների, ընտանիքի, համայնքի բնակչության սոցիալական կարիքների բավարարումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հասարակության մեջ ինտեգրվելու, ինքնօգնության և ծագած խնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացման համար պայմանների ստեղծումը, նրանց սոցիալական մեկուսացման կանխարգելումը և սոցիալական խնդիրների լուծման հարցում աջակցության տրամադրումը:

Ա. Մինասյանի կողմից ներկայացվեց նաև <<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքի նախագծի անհրաժեշտությունը, նպատակը: Նշվեց, որ ներկայումս <<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված է պետական նպաստների 4 տեսակ, որի նշանակման և վճարման կազմակերպման գործառույթները վերապահված են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին: Իսկ պետական նպաստներից՝ ընտանեկան նպաստը տրամադրվում է աղքատ ընտանիքներին, մինչդեռ սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի <<ընտանեկան նպաստ>> բաժնի համապատասխան այն տրամադրվում է միայն երեխա ունեցող ընտանիքներին:

Առանձնացվեց նաև ՀՀ սահմանների պաշտպանության իրականացման ժամանակ կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված՝ հետմահու <<Հայաստանի ազգային հերոս>> ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձին ընտանիքի նպաստ վճարելու հանգամանքը, որն առավելապես պատվովճար է և չի համապատասխանում սոցիալական աջակցության տրամադրման նպատակներին:

Ներկայացվեց նաև առկա խնդիրների վերաբերյալ առաջարկվող լուծումները, մասնավորապես՝ նշվեց, որ օրենքի նախագծով սահմանվում են պետական նպաստների նոր տեսակներ, դրանք համապատասխանեցնելով սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի պահանջներին, իսկ պետական նպաստների նշանակման և վճարման կազմակերպման գործառույթները վերապահվում են մեկ միասնական պետական մարմնին: ՀՀ սահմանների պաշտպանության իրականացման ժամանակ կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված՝ հետմահու <<Հայաստանի ազգային հերոս>> ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի տրամադրման հետ կապված հարաբերությունների կարգավորումը տեղափոխվում է <<Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին>> ՀՀ օրենք:

Լրացվեց նաև, որ օրենսդրական վերոնշյալ փոփոխությունների արդյունքում, հստակ տարանջատվելու է դրամական օգնությունների տրամադրումը սոցիալական ծառայությունների տրամադրումից:

Ա. Մինասյանի կողմից նախատեսվող օրենսդրական փոփոխությունները ներկայացնելուց հետո Հանձնաժողովի անդամներ Բ. Խառատյանի, Շ. Բարսեղյանի, Պ. Գաբրիելյանի կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1. Արդյոք կա մոնիթորինգի որևէ համակարգ, թե ինչ կարգով են տրամադրվում նպաստները ՀՀ գյուղերում՝ բացառելու համար նպաստների վճարման սուբյեկտիվ վերաբերմունքը:
2. Ինչպես են կարգավորվելու <<Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին>> ՀՀ օրենքի կիրարկման հետ կապված խնդիրները:
3. Ինչ տարբերություն կա երեխայի ծննդյան միանվագ նպաստի և միանվագ դրամական օգնության միջև:

Հնչեցված հարցերին Ա. Մինասյանի, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ: Մասնավորապես նշվեց, որ.

1. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը որոշակիորեն լուծում է տվյալ խնդիրը: Ինտեգրված սոցիալական ծառայությունների ստեղծման նպատական է և հիմնական մոտեցումը, որ քաղաքացին որևէ սոցիալական ծառայության ստանալու համար գնա 1 կենտրոն, որտեղ գործում է <<ընդունարան>>-<<գրավոր դիմումների ընդունում>> սկզբունքը: Այնուհետև՝ աշխատում են խորհրդատուները, ըստ անհրաժեշտության՝ նաև գործ վարողները: Այստեղ գործում է ավտոմատ տեղեկատվական համակարգը և սոցիալական աշխատողի ինստիտուտը, որը հնարավորինս բացառելու է սուբյեկտիվ վերաբերմունքը:
2. ՀՀ վիճակագրական ծառայության կողմից հրապարակվում են սոցիալական ոլորտի վերաբերյալ վիճակագրության տարբեր ցուցանիշներ: Ոլորտի քաղաքականությունը մշակելիս հիմք են ընդունվում նաև՝ վերոնշյալ վիճակագրական տվյալները: Արձանագրվեց նաև, որ խնդիր կա այստեղ, և որոշվեց հետագայում անդրադառնալ 2004 թվականին ընդունված <<Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին>> ՀՀ օրենքի ճակատագրին և կիրարկմանը:
3. Անապահով ընտանիքների համար, ովքեր ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունեն, բացի երեխայի ծննդյան միանվագ նպաստից՝ տրամադրվում է նաև ընտանիքում երեխայի ծննդյան դեպքում միանվագ դրամական օգնություն:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

<<Պետական նպաստների մասին>> և <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքների նախագծերն ընդունել ի գիտություն:

3. Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար Հ. Այվազյանը:

Մինչև Հայաստանի Հանրապետությունում ընթացող տեսչական բարեփոխումների գործընթացի նկարագրությանն անցնելը՝ Հ. Այվազյանի կողմից նշվեց, որ ՀՀ աշխատանքի պետական տեսչությունում իրականացվող տեսչական բարեփոխումների

շրջանակներում ներդվել է ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ, մշակվել և հաստատվել են ՀՀ աշխատանքի պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը, ռիսկայնությունը որոշող չափանիշները, ստուգման արդյունքում լրացվող ստուգաթերթերի համկարգը:

Նշվեց, որ քաղաքական որոշում է կայացվել՝ վերահսկողությունը կենտրոնացնել, և այդ ուղղությամբ այժմ իրականացվում են տեսչական համակարգի բարեփոխումներ, որոնց հիմքում ընկած է տեսչությունների խոշորացումը: Եվ՝ որպես առաջին քայլ, ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության:

Հանձնաժողովի անդամներ Բ. Խառատյանի, Շ. Բարսեղյանի, Պ. Գաբրիելյանի կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1. Հայաստանի Հանրապետությունում ընթացող տեսչական բարեփոխումների արդյունքում տեսչությունների թիվը որքան է լինելու:
2. Ինչպես է լինելու գործառույթների բաշխումը տեսչական մարմինների միջև:
3. Հանձնաժողովի նիստում ինչու չի քննարկվել ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշումը՝ նախագիծ տարբերակով:
4. Ինչպես է գործելու <<Աշխատանքի պետական տեսչության մասին>> ՀՀ օրենքը:

Հնչեցված հարցերին Հ. Այվազյանի, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից տրվեցին հանգամանալից պատասխաններ: Մասնավորապես՝ նշվեց, որ.

1. Հայաստանի Հանրապետությունում ընթացող տեսչական բարեփոխումների արդյունքում 18-ից մնալու է 9 տեսչություն: Նշվեց նաև, որ տեսչական բարեփոխումները շատ կարևոր քայլ են երկրի տնտեսության համար, և բարեփոխումների քայլերը պետք է ճիշտ հաջորդականությամբ ընթանան՝ արդյունավետությունն ապահովելու նպատակով:
2. Ֆորմալ տեսանկյունից տեսչությունների գործառույթները չեն փոխվել: Նախատեսվում է, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում տեսչությունները դուրս են գալու ՀՀ նախարարությունների կազմից և հանդիսանալու են ՀՀ կառավարությանն առընթեր պետական մարմիններ:
3. Հարցադրումն ընդունվում է, և ավելացվեց, որ Հանձնաժողովի անդամները ևս պետք է նախաձեռնող լինեն Հանձնաժողովի նիստերի օրակարգերի կազմման հարցում:
4. ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշումը՝ նախքան հաստատվելը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուղարկվել է շահագրգիռ մարմինների կարծիքին, ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությանը, ինչպես նաև ուսումնասիրվել է ՀՀ կառավարության իրավաբանական վարչության կողմից, որտեղ քննարկվել են

օրենսդրական հակասությունները: Եվ ավելացվեց, որ Հանձնաժողովի անդամները կարող են իրենց հստակ հարցադրումները, առաջարկությունները գրավոր ներկայացնել՝ հետագայում հնարավոր շտկումներ կատարելու նպատակով:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

Ընդունել ի գիտություն՝ առաջարկությունների և խնդիրների հետագա քննարկման պայմանով:

4. Հանձնաժողովի անդամների կողմից այլ հարցեր չբարձրացվեցին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՆԻՍՏԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՂ **Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**